«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Կերպարվեստ առարկայի դերը և նշանակությունը սովորողի կրթության ընթացքում
ԱՌԱՐԿԱ	**Կերպարվեստ**
ՀԵՂԻՆԱԿ	Մարիանա Արմենի Հախեյան
ՄԱՐԶ	Քաղաք Երևան
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Նորիկ Խաչատրյանի անվան h113 միջն դպրոց

Բովանդակություն

1. Ներածություն.....2
2. Պար. 1. Դպրոցականների հոգեբանամանկավարժական վերլուծություն.....3
3. Պար. 2. Նկարչության դասավանդման պատմական և ժամանակակից մեթոդների զուգահեռ վերլուծություն.....13
4. Եզրակացություն.....18
5. Գրականության ցանկ.....20

Ներածություն

Այն, որ կերպարվեստի դասավանդման անհրաժեշտությունը դպրոցում գիտակցել են ոչ վաղ անցյալում, դա փաստ է, ինչպես նաև այն, որ դեռևս Հին Հունաստանում Ալեքսանդրիայի ավագ դպրոց (ակադեմիա) ընդունվելու համար, ուսանողները քննություն են հանձնել նկարչությունից: Ի՞նչ խնդիրներ էր լուծում կերպարվեստի դասավանդումը դպրոցում, որ հետագայում՝ 20-րդ դարի սկզբին, կրթության պատասխանատուները որոշեցին կերպարվեստը դարձնել հանրակրթական դպրոցների հիմնական դասավանդվող առարկա, և հատկապես տարրական դասարաններում, իսկ այսօր արդեն ոչ միայն տարրական, այլ շարունակական՝ մինչև 12_րդ դասարան: Ո՞րն է այս հետազոտական աշխատանքի արդիականությունը, ի՞նչ խնդիրներ է լուծում, ո՞րն է այս հետազոտական աշխատանքի նպատակը : Այս հարցերի պատասխանները կներկայացնեմ ստորև բերված շարադրանքի միջոցով :

Հետազոտական աշխատանքի արդիականությունը

Թեմայի արդիականությունը կայանում է նրանում, որ այսօր ՏՏ ոլորտի բուռն զարգացման դարաշրջանում երեխան չի կարող սովորել նույն մեթոդներով, նրա արժեհամակարգը բոլորովին տարբեր է տաս-քսան տարի առաջ սովորող աշակերտի արժեհամակարգից, նպատակներից:Սակայն այս նույն տեխնոլոգիաներն առաջացնում են մի շարք խնդիրներ ուսումնական պրոցեսում. Դասավանդման իմ փորձի ընթացքում բախվել եմ թերևս ամենացավալի խնդիրներից մեկին, որն այսօր առկա է ուսումնական հաստատություններում: Առաջին դասարան հաճախորդ երեխան, ով այսօր շատ ժամանակ է անցկացնում համակարգչի, խելացի (սմարթ) գործիքների հետ, դպրոցում ուսուցչին դիտարկում է որպես «համակարգչի ստեղն», չցանկանալով ինքնուրույն մտածել, վերլուծել, եզրահանգում կատարել, ուսուցչից պահանջում է աշխատանքի վերջնական արդյունքը, ինչպես որ դա կատարում է համակարգիչը: Համակարգչով որևէ աշխատանք կատարելիս՝ երեխան մի հպումով ստանում է

ցանկալի կամ մոտ արդյունք, իսկ նկարչության ժամանակ մի երկրաչափական պատկեր նկարել ու գունավորելը երեխայից պահանջում է ձեռքի մկանների, մտքի, հույզերի վերահսկողություն, ուշադրության կենտրոնացում, կամային ճիգեր : Այսօր շատ դպրոցականների մոտ, տեսնելով համակարգչի՝ հիշողություն պահպանելու, հրահանգներ կատարելու կարողությունները, առաջանում է ապամոտիվացիա ինֆորմացիա յուրացնելու, վերհիշելու ուղղությամբ («կգուգլեմ»): Սա իր հերթին բերում է ցածր ինքնագնահատականի ձևավորմանը:Նորի ստեղծման, արարման միտքը ձևավորում է երեխայի ինքնագնահատականը : Այսօր խիստ կարևոր է երեխաների մոտ ձևավորել սպառողից ստեղծողի որակներ:

Հետազոտական աշխատանքի նպատակը

Հետազոտական աշխատանքի նպատակն է գտնել և մշակել այնպիսի մեթոդներ, որոնք հնարավորություն են տալիս կերպարվեստի դասավանդման ընթացքում, նոր գիտելիքներ հաղորդելու և հմտություններ ձևավորելու ընթացքում, պահպանել երեխաների ինքնուրույն ստեղծագործական մտածողության, անձի ձևավորման անհատական ուղին, միևնույն ժամանակ ձևավորել համընդհանուր արժեհամակարգ, գեղեցիկի հետ շփման հմտություններ :

Հետազոտական աշխատանքի խնդիրները

Հետազոտական աշխատանքի խնդիրներն են վեր հանել, թե դասավանդման մեթոդներից որոնք են առավել նպատակահարմար կիրառել, արդյոք նպատակային է կրտսեր դպրոցում պահպանել խաղային մեթոդի կիրառումը, ինչպես անցել կանոնների ու սխեմաների ուսուցմանը, որպեսզի նկարչությունը չվերածվի չոր դասապրոցեսի, այլ պահպանի գեղարվստաստեղծագործական առաջնայնությունը, ապահովվի դպրոցականի մտավոր և հոգեկան համաչափ ինքնադրսևորումն ու զարգացումը:

Պար. 1. Դպրոցականների հոգեբանամանկավարժական վերլուծություն

Կրտսեր դպրոցական տարիքը դա մանկության գագաթնակետն է, երբ երեխան մուտք է գործում «մեծերի» աշխարհ, այստեղ իր առջև դրվում են որոշակի պարտականություններ, պահանջներ: Դպրոցին հարմարվելու համար երեխայից պահանջվում է մտավոր և հոգեկան պատրաստվածություն, եթե սրանցից որևէ մեկը

թույլ է զարգացած, կամ բացակայում է, ի հայտ են գալիս մի շարք խնդիրներ ուսումնական պրոցեսում :

«…Ինտելեակտուալ պատրաստվածության դեպքում հնարավոր են զարգացման մի քանի տարբերակներ: Յուրօրինակ տարբերակ է վերբալիզմը: Այն կապված է խոսքային զարգացման չափազանց բարձր մակարդակի, հիշողության զարգացվածության հետ՝ ընկալման և մտածողության անբավարար զարգացման ֆոնին: Այս երեխաները տիրապետում են բարդ քերականական կառույցների, հարուստ բառապաշարի, բայց նրանք դժվար են ներգրավվում պրակտիկ գործունեության, խաղի մեջ: Վերբալիզմը հանգեցնում է մտածողության միակողմանիության զարգացմանը:Այսպիսի երեխաների հետ շտկողական աշխատանքները պահանջում են անցում կատարել նախադպրոցական տարիքի հատուկ գործողություններին՝ նկարչություն, խաղ, որոնք առաջին հերթին նպաստում են պատկերավոր մտածողության զարգացմանը:» [https://hy.m.wikipedia.org Կրտսեր դպրոցական տարիք]:

Նկարչության պարապմունքների ընթացքում մենք երեխաների հաղորդում ենք սիմետրիայի ու ասիմետրիայի, մեծի և փոքրի, տարբեր հարթությունների, ֆիգուրի ձևի, ծավալի, կենտրոնի մասին գաղափարներ.

«… Առարկան բնօրինակից նկարելու համար հարկավոր է սովորել նայել նրան, վերլուծել նրա ձևը, համեմատել այլ առարկաների հետ, տեսնեծ առարկայի վիզուալ փոփոխությունը տարածության մեջ տվյալ պահին, տվյալ շրջադարձում»:[Секачева А.В., Чуйкина А.М.,Пименова Л.Г. էջ 34]

«...Ավարտվում է նախադպրոցական տարիքից սկսած անցումը ակնառու պատկերավոր մտածողությունից բառատրամաբանականին:Երեխայի մոտ ի հայտ են գալիս ճիշտ դատողություններ, դատելով նա օգտագործում է օպերացիաներ:Այս տարիքին բնորոշ օպերացիաները Ժան Պիաժեն անվանել է կոնկրետ, քանի որ կարող են կիրառվել կոնկրետ ակնառու նյութի հիման վրա:» [https://hy.m.wikipedia.org Կ/Դ տարիք]:

Սա էական նշանակություն ունի նկարչության դասավանդման ընթացքում :Երեխան աշխատելով նկարել թղթի վրա, անմիջապես տեսնում է իր կատարած աշխատանքի արդյունքը : Կրտսեր դպրոցականն ըստ էության երեխա է, ով առաջնորդվում է իր հույզերով, զգացմունքներով: **Հույզերը** կարող են դրդապատճառ դառնալ, մոտիվացնել երեխային դեպի ուսումնական գործընթացը: Այսպիսով, եթե այլ ակադեմիական (մաթեմատիկա, մայրենի լեզու) գիտելիք յուրացնելու ընթացքում երեխան հարկադրված է նույն գործողությունը մի քանի անգամ կատարել, որպեսզի արդյունքի հասնի, դեռ մի բան էլ ավելի, այս առարկայի վերջնարդյունքը երևում է ապագայում (ինչի համար է ինձ պետք մաթեմատիկա, ինչի համար եմ սովորում աղյուսակը, ով է հորինել այս աղյուսակը և նման այլ հարցերի կույտ), ապա նկարչության պահին նա տվյալ պահին կատարում է գործողություն, որի արդյունքը՝ նկարը, առկա է այդ պահին: Ավելի լավ արդյունք ունենալու համար նա պետք է կամ ցանկանում է տիրապետել

նոր հնարների: Եվ այս գործընթացը նրան մղում է ուսումնասիրելու շրջապատող իրականությունը, առարկաները, երևույթները, բացահայտել նրանց անտեսանելի կապերը: «Հույզերը խորը ազդեցություն են թողնում հիշողության և մյուս ճանաչողական գործընթացների վրա, կարգավորում են մարդկանց վարքը:

Տարբեր հույզեր տարբեր կերպ են ազդում մարդկանց վրա:Ակտիվացնող հույզերի ազդեցության տակ մարդիկ երբեմն այնպիսի արդյունքներ ու նվաճումներ են գրանցում, որոնք սովորական հանգիստ վիճակում անհասանելի են:Օրինակ ոգեշնչվածությունը անհավատալի արդյունքի է հանգեցնում:

...Փոքրերի հուզական վիճակի կառավարման անհրաժեշտության մասին Վ. Բեխտերևը գրել է, որ հուզական վիճակի «անհանգստությունները» նպաստում են երեխային նորմալ զարգացմանը, այդ թվում և ինտելեկտուալ զարգացմանը: «Բավարարված ու երջանիկ երեխան առավել լավ է սնվում և առավել լավ մարսում սնունդը, նա առույգ է, ուժեղ ու աշխատունակ, ավելի շատ է հետաքրքրվում խաղերով ու օարապմունքներով, հեշտ է հաղթահարում խնդիրները»: Ի. Պեստալոցին գրել է. «Ամենակարևորը երեխաներին իրենց զգացմունքներին տիրապետել սովորեցնել է»: Մարդկային գործունեության շատ տեսակներ, որոնք ստեղծագործական բնույթի են, կարիք ունեն ներշնչման, հոգևոր աճի»:[https://hy.m.wikipedia.org Հույզեր]:

Հույզերի համաչափ դրսևորման, զարգացման և գրագետ օգտագործման հարցում մեծ է նկարչության դերը: Նկարչության դասին աշակերտները կարող են լիցքաթափվել՝ գույների միջոցով արտահայտելով իրենց հույզերը, ի ցույց դնելով իրենց թաքնված տագնապները և հոգեվիճակը:Գունային խաղի միջոցով կարելի է հավասարակշռության բերել երեխայի հուզական ոլորտը և ապահովվել ուսումնական գործընթացի կայուն ընթացքը՝ բարձրացնելով ընկալունակությունն ու օգնելով մտածողության տեսակների բացահայտման ու զարգացմանը: Ինչպես ասել է Սարյանը. «Գույն զգացող մարդը դժբախտ է»:

«Գույնը բնության հրաշալի դրսևորումներից է: Նա ոչ միայն կարևոր տեղեկություն է տալիս առարկայի մասին, այլ նաև ունի մարդու միտքը և զգացմունքները հանգստացնող և ակտիվացնող հատկություն» [Секачёва А.В., Чуйкина А.М., Пименова Л.Г., էջ 80]:

Գույնը ոչ միայն հոգեբանական ազդեցություն է թողնում մարդու, տվյալ պարագայում երեխայի վրա, այլ նաև օգնում է բացահայտել աշխարը:Երեխան առաջինը արձագանքում է գույնին, առարկաները մտահոգում է ըստ իրենց գույների, և միայն հետագայում է գույնը առանձնանում առարկայից:

«Ընկալելով առարկայի գույնը՝ մարդը ստանում է տեղեկություն նրա այլ հատկությունների մասին:Առարկան կարող է լինել տաք, թեթև, հոծ, շրջանաձև, մեծ և այլն: Գույնի և տվյալ առարկայի մասին գաղափարը դիտորդի նոտ առաջացնում է յուրահատուկ ասոցիացիաներ: Կարելի է ենթադրել, որ դեղին գույնը ասոցացվում է

արևի, երկնագույնտ՝ ջրի, հորիզոնի, կանաչը՝ մարգագետին, անտառի հետ, իսկ կարմիրը՝ կրակի ու արյան: [Секачёва А.В , Чуйкина А.М., Пименова Л.Г., էջ 81]:
Ինչպես են ընկալում երեխաները շրջապատող իրականությունը, ինչ առանձնահատկություն ունի երեխայի ընկալումը և զարգացման ինչ ուղի է անցնում այն: Այս բոլոր հարցերի պատասխանը տվել է հոգեբանություն գիտությունը:Հոգեբաններին առհասարակ գտնում են, որ մարդու իմացական գործընթացները զարգանում են փոխկապակցված և մեկը մյուսին լրացնելով, առաջացնելով նոր կապեր, ձևավորելով նոր որակներ:

Մենք արդեն խոսել ենք այն մասին, որ երեխաների համար մոտիվացիան են հանդիսանում ցանկությունները, հույզերը:Եթե որևէ երևույթ նրան հետաքրքրում է, նա սկսում է գործունեություն ծավալե՝ լցանկությունը բավարարելու համար:Եվ այս այս փուլում սկսվում է ընկալման ակտիվ փուլը:

Այսպիսով ինչ է ընկալումը:

«Ասոցիատիվ հոգեբանության մեջ ընկալումը ընդունվում է որպես զգայությունների հավաքական հավաքական խումբ:Ենթադրվում էր, որ ընկալումը տեղի է ունենում մի քանի զգայություններ իրար համադրելու ճանապարհով, այնպես ինչպես առանձին հիշողություններ կամ պատկերացումներ՝ մեկը մյուսին կապակցված, ստեղծում են կայուն հիշողություն»[Выготский Л.С. Психология развития человека, էջ564]:
Որոնք են ընկալման այն հատկություններ, որոնք խիստ կարևոր են, որ մեր ընկալումը չունենա պաթոլոգիաներ: Մեր ընկալումը ամենից առաջ բնութագրվում է նրանով, որ մենք ընկալում ենք քիչ թե շատ կայուն, չդասակարգված, կապակցված պատկերը ամենուր, ուր էլ որ ուղղենք մեր հայացքը, քառսը երբեք չի ընկալվում[Выготский Л.С. Психологиа развития человека էջ 568]:

Ընկալման առաջին առանձնահատկությունը առարկայի չափերի ընկալման կայունությունն է:

...Ինչպես ասում է Գելմգոլցը, գեղանկարչության ուսուցիչները քիչ ջանքեր չեն վատնում, որպեսզի բացատրեն աշակերտներին այն, որ նրանք տեսնում են սեղանի միայն մի կողմը, այլ ոչ թե սեղանն ամբողջությամբ :
Գույնի, ձևի, չափի և մյուս այլ հատկությունների անփոփոխ ընկալումը կոչվում է օրթոսկոպիկ ընկալում: **Օրթոսկոպիկ** կոչվում է այն ընկալումը, որի ժամանակ մենք առարկաները տեսնում ենք ճիշտ:Անկախ ընկալման պայմանների փոփոխության, մենք տեսնում ենք առարկան այն մեծության, գույնի ու ձևի, որը այն ունի [3, էջ 581]:

...Գելմգոլցը նշել է նաև, որ օրթոսկոպիկ ընկալումն առաջնային չէ, այլ ի հայտ է գալիս զարգացման ընթացքում:

Նախկին փորձս ինձ հուշում է, որ այս իրը ես տեսել եմ մոտ տարածությունից, և այն այժմ հեռացրել են, այսինքն ընկալմանը այս պահին միանում է մտավոր գործողությունը, որը կատարվում է ենթագիտակցական մակարդակով»[3. էջ571]:

Նկարչությունը, որպես հասարակական փորձի և գիտելիքի հաղորդման միջոց, շրջապատող իրականությունը ընկալելու և յուրացնելու ձև, շատ կարևոր է դպրոցական տարիքում: Նկարչության պարապմունքներն օգնում են երեխային հասկանալ, որ առարկաները, որոնք հեռվում են և փոքր են երևում, իրականում այնքան էլ փոքր չեն: Այն երեխաները, ովքեր խնդիր ունեն խորքային հաղորդակցման հետ, նկարչությունը դառնում է հրաշալի միջոց՝ մտքի նույնականացման, էքստերորիզացիայի համար:Նկարչության դասընթացը՝ մասնավորապես բնանկարի և նատյուրմորտի ուսուցումը, օգնում է երեխային զարգացնել դիտունակությունը, ընկալման ծավալը, տեսածը ճիշտ հասկանալու կարողությունը :

«...Աշխարհը տեսնելու կարողությունը բարդ արվեստ է: Պատմության մեջ, որը հենց այդպես էլ կոչվում է «Աշխարհը տեսնելու արվեստը» Կ. Պաուստովսկին գրել է նկարչի՝ նկարչական դիտունակության ազդեցության մասին իր աշխարհընկալման վրա. «Ես լսեցի նկարչին, և իսկապես, և՛ առարկաները, և՛ մարդիկ, դարձան ավելի հետաքրքիր քան նախկինում, երբ ես նրանց նայում էի հապճեպ, հպանցիկ, և ինձ համակեց ափսոսանքի զգացում՝ անիմաստ հատված ժամանակի համար:Անցած տարիներին որքան հրաշալի երևույթներ չեմ նկատել, որքան հետաքրքիր երևույթներ են անցել անվերադարձ, որոնք այլևս չեն վերադարձվի» [Г. Башинджагяан Избран. Произвидения էջ 93]:

«Երեխայի ընկալման գործընթացի մեխանիզմն անցնում է զարգացման չորս հիմնական փուլեր: Սկզբում դա առանձին առարկաների ընկալումն է՝ *առարկայական* փուլ: Այնուհետև երեխան, անվանելով առարկան, անվանում է նաև այն գործողությունը, որը կատարում են այդ առարկաներով՝ *գործողությունների* փուլ, ինչից հետո երեխան նշում է առարկաների որակական կողմը, վերջապես սկսում է պատկերը ամբողջական նկարագրել:

Հիմնվելով այս փորձերի վրա՝ Պ.Պ. Բլոնսկին և Շտերնը գտնում էին, որ մենք հնարավորություն ենք ստանում գաղափար կազմել երեխայի գիտակցված ընկալման գործընթացի զարգացման հիմնական փուլերի վերաբերյալ:

Երեխան միշտ սկսում է առանձին բառերի արտասանությամբ: Որպես կանոն այդ բառերը զարգացման նախնական փուլում գոյականներ են, հետագայում զինվում են բայերով. ծնվում են այսպես կոչված երկանդամ, պարզ նախադասություններ:Երկրորդ փուլում արդեն ի հայտ են գալիս շարականները և բառակապակցությունները, որին էլ հաջորդում է ամբողջ նկարի պատմումը:

Այսպիսով, այն հայտնի չորս փուլերը ոչ թե ընկալման, այլ խոսքի զարգացման փուլեր: Առավել հասկանալի լինելու համար կասեմ, որ եթե մենք երեխային առաջարկենք պատմել նկարը, մենք իսկապես կստանանք այն պատկերը, որը նշված է փորձում: Սակայն եթե մենք նույն տարիքի, կամ հենց նույն երեխային առաջարկենք խաղալ այդ նույն սյուժեն (դերային խաղ), ապա նա երբեք չի խաղա առանձին առարկաներ, նա սյուժեն ամբողջությամբ կվերարտադրի:[3.էջ 579]

Կրյուգերն առաջարկել է վաղ տարիքի ընկալումն անվանել «հուզական ընկալում»: Նրա հետազոտությունները ցույց են տվել, որ միայն ժամանակի ընթացքում է ընկալումը ազատվում աֆեկտի անուղղակի ազդեցությունից, երեխայի հույզերից:[3. էջ581]:

Երբ մենք ավագ նախադպրոցական տարիքում (6 տարեկան, իսկ այսօր երեխան այս տարիքում դպրոց հաճախում) երեխային հանձնարարենք է նկարել ինքնուրույն ստեղծագործական աշխատանք, մենք կտեսնենք, որ այն երեխան, ով չունի առարկան պատկերելու հմտություններ, պարզապես գծեր, խառը անհասկանալի պատկերներ են անում, սակայն, եթե թե ինչ ես պատկերել, մի ամբողջ տեսարան կարող է պատմել: Մի գծով նա գործողություն, սյուժե է պատկերում : Եվ սա ուղիղ կապ ունի երեխայի մտածողության հետ:

Ընկալումն ուսումնասիրելու ընթացքում մենք տեսանք, որ երեխաներն իրավիճակն ընկալում են ամբողջությամբ, սակայն վերարտադրում միայն մեկ բառ, հիմնականում գոյականը: Հետագայում ընկալման առանձնահատկությունների ուսումնասիրելու ժամանակ հանդիպեցինք նաև այնպիսի երևույթի, ինչպիսին ընկալման կայունությունն է:Ինչպես օրինակ հեռու և մոտ առարկաներ օրինակում, երբ մենք հեռվում գտնվող առարկան փոքր ենք տեսնում, սակայն գիտակցում ենք, որ այս իրը (լավ, ինքնաթիռ) շատ մեծ է, պարզապես հեռվում է:Այստեղ ընկալման գործընթացը ընթանում է հիշողության և մտածողության հետ զուգահեռ :

«Մանկական մտածողությունը միայն երեխային հասու մի երևույթ է, այլ կերպ ասած «Երեխայի սեփականությունն է» - Պիաժե» [3. էջ 604]

«Մտածողությունը ճանաչողական գործունեության տեսակ է: Սա նշանակում է, որ այս գործունեությունը պատասխանում է այս կամ այն ճանաչողական դրդապատճառին: Այս գործունեությունը, ինչպես մարդկային գործունեության այլ ձևերը, դժվար կարգավորվող է: Ընդ որում այս գործունեությունը կարգավորվում է հուզականորեն:[3. էջ 605]

Մենք բոլորս էլ, շփվելով երեխաների հետ, բազմիցս նկատել ենք, որ երեխաների միտքը տարբերվում է մեծահասակների մտքից, հատկապես դա լավ արտահայտվում է նկարչության ընթացքում, երբ երեխան նկարում պատկերում է ծաղիկի հոտը: Այսինքն ստացվում է, որ երեխայի մտքին բնորոշ է անտրամաբանական դրսևորումը: Սակայն երեխաները ունակ են տեսնել երևույթների միջև եղած կապեր, որոնք շատ անգամ չեն նկատի մեծահասակների, սակայն գործնականում անտրամաբանական գործողություններ են կատարում, որը տվյալ իրավիճակում չի անի հասուն տարիքում հենց նույն երեխան. «Չարժեն տարօրինակ հակադրություն է համարում այն, որ երեխայի միտքը միաժամանակ ողջամիտ է, և՝ ոչ:[3.էջ 605]

...Պիաժեն գտնում էր, որ երեխայի մտածողությունը կրում է երկակի իմաստ:Բայց ինչպես գրում է նա. երեխան ամենասկզբից, երբ ձևավորվում է նրա մոտ

մտածողությունը, արդեն իսկ տիրապետում է մտածողության, թեև ոչ լիարժեք բացահայտված, բայց ամբողջական ապարատին» [3.էջ 605]:

Այսինքն ի՞նչ է ստացվում, որ երեխայի մոտ առկա են մտածողության բոլոր տեսակների հիմքերը, սակայն դրանք կարիք ունեն բացահայտելու, զարգացնելու, որին էլ միտված է ուսումնական գործընթացը: Ինչպես արդեն նշվել է ներածության մեջ, թեմայի ուսումնասիրման նպատակը է գտնել այն մեթոդները, որոնք հանրակրթական դպրոցում առավելագույնս կնպաստեն ստեղծագործական, պատկերավոր, վերացական մտածողությամբ զարգացմանը, անկախ նրանից երեխան ունի նկարչական առանձնահատուկ ունակություններ, թե՝ ոչ:

Հետագա հետազոտությունները հոգեբաններին հանգեցրին այն կետին, որ մտածողության զարգացումը սերտորեն կապված է խոսքի զարգացման հետ: Երեխայի սոցիայիզացիան տեղի է ունենում խոսքի միջոցով: Փորձենք հասկանալ թե ինչ կապ գոյություն ունի երեխայի մտածողության, ընկալման, խոսքի և նկարչության միջև:

Շատ հաճախ պրակտիկայում մենք երեխաներից պահանջում ենք նկարի բովանդակության հարստացում: Երեխաները գրեթե միշտ պատկերում են նույն սյուժեն՝ ծառ, տուն, արև, ավտոմեքենա, ծաղիկ և այլն:Հաջորդ աշխատանքի ժամանակ այդ նույն նկարում հնարավոր է միայն գույն փոխված լինի, կամ պատկերի վրա որևէ, հաճախ աննկատ տարր ավելացած լինել, ինչպես օրինակ աչքերի թարթիչները են, կամ ուղիղ գծի փոխարեն՝ շրթունքները : Սա անմիջական կապ ունի նրանց մտածողության առանձնահատկության հետ: Ինչումն է բանը, ինչու է երեխան անընդհատ միևնույն առարկան պատկերում:

Ըստ հոգեբանների հետազոտությունների երեխաների ընկալումն ու մտածողությունը մինչև կրըսե դպրոցական տարիքի ավարտը առարկայական է: Նրանք ընկալում և վերլուծում են առարկայի արտաքին տեսքը, այլ ոչ թե առարկայի քողարկված կապերը:

Ինչ է նշանակում առարկայական մտածողություն, ինչպես է դա դրսևորվում:

Արտաքին խոսքի յուրացման ընթացքում, երեխան նախ արտաբերում է բառը, ապա բառակապակցությունները, այնուհետև պարզ նախադասությունը, այնուհետև պարզ մտքերը բեր են ածվում բարդ մտքերի, և միայն մի քանի տարի անց է երեխան տիրապետում բարդ նախադասությունների՝ աստիճանաբար հասնելով ամբողջական պատմությանը: Մեր նպատակը լեզվաբանական խնդիրների բացահայտումը չէ, ուստի միտքս ավելի հակիրճ և ամբողջական կձևակերպելու համար կնշեմ, որ «Երեխայի առաջին բառը, որը չունի ենթակա, դա մի բառանի նախադասություն է, մի ամբողջական միտք, որը հրաշալի նկարագրել է Շտերնը:Այստեղից արդեն պարզ է, որ երեխան, ով արտաբերում է առանձին բառեր, իրականում բառի իմաստային կողմում ոչ թե առարկան ճանաչելու խնդիր է դնում, ինչպես մեծահասակների, այլ մի ամբողջական նախադասություն, կամ

նույնիսկ մի քանի նախադասություն: Եթե մանկան մի պատանի նախադասությունը վերծանենք մեր լեզվով, մենք ստիպված կլինենք օգտագործել բարդ համադասական նախադասություններ, որպեսզի մեծահասակ միտքը համազոր լինի երեխայի ասած պարզ, մի բառից կազմված նախադասությանը [3. էջ 609]:

Ինչ է ստացվում, որ երեխաները յուրացնելով առարկայի կամ գործողության անվանումը, դա դեռևս չի նշանակում, որ նա յուրացրել բառի ողջ իմաստային կողմը:Իրականում նախադպրոցական տարիքում, երբ երեխան կարողանում է ավարտուն նախադասություններ գործածել, և կարծիք է ստեղծվում, որ նրա խոսքը ձևավորված է ու նա արդեն պատրաստ է դպրոցական ուսուցման, նա գտնվում է առարկաների բացահայտման ու յուրացման նոր փուլի սկզբում:Ինչ է ստացվում, արտաքին տպավորություն է ստեղծվում, որ երեխան որակական առումով դոփում է տեղում, և միայն ինֆորմացիոն կողմն է ընդլայնվում, մինչ դեռ երեխան խորացնում է իր մակերեսային գիտելիքները:

«...Տարիքը, որը խոսքի զարգացման տեսանկյունից դիտում էին որպես մի շրջան, որը ոչ մի նորույթ չէր ներմուծում, դպրոցական առաջին տարիները, որը դիտարկվում էր որպես քանակական աճի տարիք, մի փուլ, երբ երեխան միայն հստակեցնում էր տարրերը և նրանց ներքին կապերը պատկերացման մեջ, այդ տարիքը այսօր առաջ է մղվում առաջին հորիզոնական՝ իր գործընթացի բարությամբ և հարստությամբ:»[3. էջ 613]

Իսկ որտեղ և ինչով է նկարչությունը նպաստում այս գործընթացին հանրակրթական դպրոցում:

Վերը նշվածը հասկանալի է դառնում այն փաստը, թե ինչու երեխաների նկարներում այս տարիքում սյուժետային փոփոխություններ տեղի չեն ունենում. միևնույն ծառը, ծաղիկը, տունը և այլն:Սակայն իրականում այդ նույն ծառը պարզունակ խզբզոցից վեր է ածվում իմաստավորված ծառաբուն, ճյուղեր, տերևներ ունեցող ծառի: Երբ երեխան արտաբերում է ծառ բառը, մեծահասակի մոտ կարծիք է ստեղծվում, որ նա պատկերացնում, ընկալում է այդ գոյականն իր ամբողջ տարրերով՞ բայց իրականում այդպես չէ:Իրականության մեջ թե՛ նախադպրոցական, թե՛ դպրոցական տարիքի երեխաները շրջապատն ընկալում են ամբողջությամբ, հետագայում նոր առարկայկանացնում է, իսկ դպրոցական տարիքում իմաստավորում է յուրաքանչյուր առարկան իր բոլոր էլեմենտներով:Այստեղ տեղի է ունենում դիդակտիկայի օրենքներից ամբոխջից դեպի մասնակիի անցումը օրենքի կիրառումը:Այստեղից հետևություն, որ նկարչության ուսուցման գործընթացում հարկավոր է գնալ ընդհանուր դեպի մասնակից, այս մասին ավելի մանրակրկիտ կխոսենք երկրորդ գլխում: Իսկ այժմ այն մասին, թե ինչպես է նկարչությունը օգնում բացահայտել առարկայական աշխարհը, ինչու չէ նաև հոգևոր՝ գույների և նկարում արտահայտված հույզերի միջոցով:

... «Հիշիր, որ դեպի արվեստի գլխավոր դարպասները ամենահիդիալական ուղղորդողները, բնօրինակից նկարչությունն է» -այսպես է գրել Չենինի Չենինոն իր տրակտատում» : [5. էջ 21]

Ամբոխջից մասնակիի անցնելու ժամանակ երեխաները բացահայտում և յուրացնում են հենց այն, ինչն իրենց հարկավոր է: Այդ իսկ պատճառով նպատակահարմար է դպրոցական կրթության ընթացքում նկարչությունը ակտիվ կիրառել՝ այլ առարկաներից ստացած նոր գիտելիքներ ամրապնդելու համար: Չէ որ երեխան ակնառու արված գործունեությամբ նյութն այս տարիքում ավելի լավ է յուրացնում, քան վերացական ասված խոսքը: Թերևս կարելի է ասել, որ նկարչությունը նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքում երեխային գիտելիք հաղորդելու և իմացական գործընթացները զարգացնելու հիմնական գործունեության ձևերից մեկն է:

Արտաքին աշխարհի բացահայտման գործընթացում պակաս կարևոր դեր չի խաղում իմացական գործընթացներից **հիշողությունը:**

Հիշողությունը իմացական գործընթաց է, որը կոչված է կուտակելու, պահպանելու և վերարտադրելու ձեռք բերված փորձը:

Երբ մենք նկարչության դասընթացներին երեխաների հետ կատարում ենք ճեպանկարներ բնության գրկում, իհարկե ուսումնասիրություններ կատարելուն զուգահեռ, այնուհետև, հիմնվելով ճեպանկարում վրա, ստեղծում ենք ստեղծագործական կոմպոզիցիաներ դասասենիակում, արվեստանոցում, երբ տվյալ ազդակն այլևս ներկա չէ և անմիջական ազդեցություն չի գործում տեսողական ապարատի վրա, ապա դրանով մենք օգնում ենք երեխային հոգեկանի զարգացման փուլում բարձրանալ նոր հարթություն՝ ձեռք բերելով նոր գիտելիքներ, և ձևավորելու նոր հմտություններ : Նկարելով, պատկերացնելով էքսկուրսիայի ընթացքում ստացած գիտելիքները՝ մենք ամրապնդում ենք այն, զարգացնում պատկերավոր մտածողությունը, ստեղծագործական միտքը:Իսկ ինչում չեմ նշում հիշողությունը: Թեև ճիշտ ժամանակն է մեջբերել Վիգոտսկու ուսումնասիրություններից հետևյալ միտքը, որ «մի շարք հոգեբաններ պնդում են, որ հիշողությունը չի զարգանում, այլ վաղ տարիքում այն արդեն իսկ իր զարգացման գագաթնակետում է: Այս թեորիան ես մանրամասնորեն չեմ ներկայացնի, բայց մի շարք դիտումներ, իսկապես ցույց են տվել, որ հիշողությունը արտակարգ զարգացած է լինում վաղ տարիքում և երեխայի աճին զուգընթաց թուլանում է :[3. էջ 589]

…Վաղ տարիքում երեխան խաղով ու կատակով յուրացնում է մի նյութ, որը դպրոցականը յուրացնելու համար շատ ժամանակ և ջանքեր է վատնում: Վաղ տարիքի երեխայի հիշողությունը համեմատության եզրեր չունի դեռահաս, առավել ևս մեծահասակ հիշողության հետ: Բայց դրա հետ մեկտեղ երեխան, ով երեք տարեկանում շատ հեշտ է յուրացնում օտար լեզուներ, չի կարող յուրացնել համակարգված գիտելիքներ աշխարհագրության, իսկ ինը-տաս տարեկան

դպրոցականը, ով դժվարությամբ է յուրացնում օտար լեզուները, հեշտությամբ յուրացնում է աշխարհագրությունը:

...Կ. Գրոսի աշակերտ Զեյդելը մեծ նյութ հավաքեց և փորձեց ցույց տալ, որ երեխայի հիշողությունը իր զարգացման գագաթնակետին է հասնում տաս տարեկանում, նրանից հետո այն սկսում է թուլանալ, նվազել [3. էջ 590]:

«*Հիշողության տեսակներն* ըստ որակի լինում են պատկերավոր, էյդետիզմ, իմպրիտինգ, շարժողական, բառատրամաբանակ, հուզական: Ըստ գործունեության նպատակի՝ կամային, ակամա: Ըստ տևողության՝ կարճատև, երկարատև, օպերատիվ:

Էյդետիզմ (հին հուն.՝ էյդոս-պատկեր, արտաքին տեսք) հիշողության հատուկ արտահայտչաձև է, հիմնականում դիտողական տպավորությունների, որոնք թույլ են տալիս պահպանել և վերարտադրել ընկալած առարկայի կամ երևույթի կենդանի պատկերները:

Բառատրամաբանական հիշողությունը արտահայտվում է մարդկանց մտքերի մտապահման և վերարտադրման մեջ: Մարդ հիշում և վերարտադրում է մտքեր, որ առաջացել են մտորելու, իրականացնելու պրոցեսում, հիշում են կարդացած գրքի, ընկերների հետ խոսակցության բովանդակությունը : [https://hy.m.wikipedia.org Հիշողություն]

Նկարչության դասընթացին, օգտվելով էյդետիկ, պատկերավոր և բառատրամաբանական հիշողության ընձեռած հնարավորություններից, մենք օգնում ենք երեխային ամրապնդել իր գիտելիքները, սեփական ուսումնասիրությունները շրջակա միջավայրում, սովորեցնում ենք ոչ թե նայել, այլ տեսադաշտում եղած իրերը, երևույթները խորությամբ ուսումնասիրել և ամրապնդել իր գիտակցության մեջ: Այդ իսկ պատճառով, նկարչությունը նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքում, հույզեր արտահայտելուց բացի ունի ավելի կարևոր գործառույթ՝ այն է երեխային փոխանցել մեր պատմամշակութային կենսափորձի, պատրաստի գիտելիքներ հաղորդել, զարգացնել տարածության և ժամանակի ընկալումը, զարգացնել մանր մատորիկան, որն էլ իր հերթին նպաստում է մտածողության զարգացմանը :

«...Հիշողությունը վաղ մանկության շրջանում հոգեկան կարևորագույն ֆունկցիաների մեկն է, որից կախված կառուցվում են մյուս բոլոր հոգեկան գործընթացները: Վերլուծությունները ցույց են տվել, որ վաղ տարիքի երեխայի մտածողությունը մեծամասամբ կողմնորոշվում է նրա հիշողությամբ: Վաղ տարիքի երեխայի մտածողությունը բոլորովին տարբերվում է ավելի հասուն տարիքի երեխայի մտածողությունից: Վաղ տարիքի երեխայի համար մտածել նշանակում է հիշել:Այլևս երբեք մտածողություն ասայսքան կապված չի լինում հիշողության հետ, որքան վաղ տարիքում: Այս տարիքում մտածողությունը զարգանում է հիշողության հետ զուգահեռ:» [ВЛС էջ597]

Երևակայություն. «Երևակայությունը նույնությամբ, միևնույն հերթականությամբ չի կրկնում նախկինում ստացած տպավորությունները, որոնք արդեն կան կուտակված մեր կենսափորձում, այլ ստեղծում է բոլորովին նոր շարք մեր տպավորություններից: Երևակայության գործընթացը, նույնիսկ այն դեպքում, երբ հիմնվում է հիշողության վրա, հոգեբանորեն այլ գործունեություն է, տարբեր հիշողությունից:Երևակայության հատուկ է նոր կերպարի ստեղծումը, որոնք չեն եղել գիտակցության մեջ, մեր նախկին փորձում:Բայց, եթե երևակայությունը ունակ է ստեղծել նոր կոմբինացիաներ, այն ունակ չէ ստեղծել նոր տարր: [3. էջ 637]

«Մենք տեսնում ենք մտածողության և երևակայության միջև եղած սերտ կապը, որը կայանում է նրանց զարգացման բեկումնային գենետիկ փուլում, այն է խոսքի ի հայտ գալը: Դպրոցական տարիքը բեկումնային է երեխայի և՛ իրական, և՛ աուտիկ մտածողությունը զարգացման համար: Այլ կերպ ասած մենք ականատես ենք լինում, որ տրամաբանական և սուտլիկ մտքերը զարգանում են խիստ փոխկապակցված:Առավել խորը քննությունը մեզ հնարավորություն կտար առավել համարձակ ձևակերպման, որ երկուսն էլ զարգանում են որպես մեկ ամբողջություն, որ ոչ մեկի, ոչ մյուսի ինքնուրույն զարգացում մենք չենք նկատում: Ավելին, դիտարկելով երևակայության այնպիսի ձևեր, որոնք կապված են արվեստի, իրականության վերափոխման հետ, մենք կտեսնենք, որ իրական մտածողության և երևակայության միջև եղած սահմանը վերանում է, որ երևակայությունը հանդիսանում է մտածողության ոչ միայն անքակտելի, այլ նաև խիստ անհրաժեշտ տարր:

Այսպիսով մենք տեսնում ենք, որ իմացական գործընթացները զարգանում են մեկը մյուսի հետ խիստ փոխկապակցված, մեկը մյուսին իր ետևից տանելով: Եվ, որ այս ամենում շատ կարևոր է խոսքի, բառապաշարի զարգացումը: Սակայն մենք ուսումնասիրենք նաև այն փաստը, որ շրջապատի գիտակցումը երեխայի կողմից ավելի արագ է տեղի ունենում, քան բառապաշարի զարգացումը: Իսկ նկարչությունն առավել հեշտ տարբերակ արտահայտելու այն, ինչ երեխան գիտի իր շրջապատի մասին, այն, ինչ զգում է:Այսինքն նկարչությունը լրացնում է բացակայող բառերը, լրացնում է խոսքը:

Բացի սա, նկարչությունը կապված լինելով ձեռքի աշխատանքի հետ, վերջինիս վեր է ածվում «խոսքի օրգանի» : Նկարչությունը զարգացնող դեր ունի նաև տեսողության, շարժողական կոորդինացիայի, խոսքի, մտածողության, երևակայության համար:

Այսպիսով մանկան նկարները մասնագետների համար կարող են ծառայել որպես ախտորոշիչ միջոց, իսկ առօրյա կյանքում նկարչությունը նպաստում է երեխայի ընդհանուր զարգացմանը: Մանկան նկարները յուրահատուկ պատմություններ են երեխայի հուզակամային և ինտելեկտուալ ոլորտի զարգացման մասին: Եվ անշուշտ նկարչությունը պետք է լինի երեխայի առօրյա զգացմունքների ցանկում:

Ինչ խոսք նկարչական հմտությունների զարգացումը կարևորել են դեռևս քարե դարում, քանի որ նկարը հաղորդակցման հիմնական միջոց է եղել և այսօր էլ

շարունակում է իր այդ գործառույթը: Մենք անցած ժամանակների մասին տեսողական պատկերացում ենք կազմում նկարների միջոցով:

«Նկարելու կարողությունը միշտ եղել ու մնում է կարևորագույն գործողություններից մեկը մարդու համար, իսկ նրա կիրառումը ծառայել ու ծառայում է մարդկությանը՝ որպես հաղորդակցման ձևերից մեկը:Նախամարդը նկարել է ածուխով ու սրածայր քարով, նախ գծանկար է արել, հետո քարով ստորագրել ու ներկել: Հարկ է նշել, որ այդ բոլոր նկարները ռետուալային բնույթ են կրել և այդպիսով դարձել մարդկային մտքի փոխանակման յուրահատուկ ձև: Սա է ընկած գրի զարգացման հիմքում՝ նախ պիկտոգրաֆիա (նկարային), ապա իդիոգրաֆիա, որտեղ յուրաքանչյուր նշան մի բառ էր, և վերջապես հնչյունաբառային համակարգը:» [5. էջ 13]

Պար. 2. Նկարչության դասավանդման պատմական և ժամանակակից մեթոդների զուգահեռ վերլուծություն

Եթե ցանկանում եք մտածել սովորեցնել, ապա նախ և առաջ հորինել սովորեցրեք: Ջանի Ռոդարի

Հետազոտական աշխատանքի շրջանակներում, ուսումնասիրելով մանկավարժ-նկարիչների փորձը, համադրելով իմ աշխատանքային փորձի հետ՝ կարող եմ վստահորեն ասել, որ նկարչությունը դա միայն գծի և գույնի ուսուցանում չէ, այլ այն բազմակողմանի գիտելիքների հաղորդման և գեղագիտական դաստիարակության խնդիներ է լուծում:

Ալբերտի նկարչության վերաբերում էր ոչ որպես մեխանիկական վարչության, այլ՝ որպես ուղեղի աշխատանքի: Ավելի ուշ Միքելանջելոն այս մտքի ավելի գիտական սահմանում է տվել. «Նկարում են գլխով, այլ ոչ թե ձեռքով»:

Հետազոտության շրջանակներում մեր առջև դրված նպատակներին հասնելու համար ընտրել եմ ***բնանկարի ժանրը:***

Կրտսեր դպրոցականները, ծանոթանալով բնանկարի ժանրի հետ, նկարչության միջոցով ուսումնասիրելով բնությունը, ընդլայնում է իր աշխարհընկալումը, մարզում և

զարգացնում է դիտունակության, վերլուծելու և համադրելու կարողությունը, օգտվելով այս տարիքի երեխայի էյդետիկ հիշողության հնարավորություններից, հարստացնում ենք նրա գիտելիքները՝ հայրենի բնության, պատմամշակութային կոթողների, հուշարձանների և այլն մասին:Բնակչության ուսուցումը լայն դաշտ է ստեղծում բարոյական, գեղագիտական դաստիարակության, ինչպես նաև բնապահպանական որակներ ձևավորելու համար: «...Շփումը գեղեցիկի հետ նպաստում է երեխայի կողմից գեղեցիկի ընկալման, գեղեցիկի կառուցմանը, ստեղծմանը և ի վերջո գեղեցիկ միջավայրում ապրելու և պահպանելու ցանկությանը:

...Բնության գրկում գտնվելը արդեն իսկ հնարավորություն է տալիս երեխային բնազդաբար զգալու բնության ամբողջ ներդաշնակ գեղեցկությունը, ակամայից առնչվելով գեղեցկության բազմաթիվ նմուշների հետ: «Բնությունն այն կենսահյութն է, որ մշտապես գաղափար և նյութ է դառնում դաստիարակության իրականացման համար: Հայրենի բնությունն իր ազգամաշակութային բազմադարյա շերտերով, քարակերտ և ձեռակերտ կոթողներով, ազգի պատմությամբ, լեզվով և կենցաղով՝ ընդհանրական ձևով հենք է հանդիսանում գեղագիտական դաստիարակության համար:»(Լեմս Ներսիսյան):Հայրենի բնության հետ երեխայի մշտական շփումը, բնության երևույթների և տարվա եղանակների, կենդանիների և բույսերի մասին տեղեկություն ստանալու նրա ցանկությունը միջոց են դառնում գեղագիտական դաստիարակության համար»:[2. էջ 207_208]

«...Գեղագիտական գործունեությունն աջակցում է կյանքում ձևավորել նոր գեղարվեստական ճաշակ, իդիալներ, գեղեցիկի հասարակական նորմեր և այլն, որտեղ և պատմահասարակա հարաբերությունների ամբողջ պրակտիկայի կառուցվածքի հիման վրա ստեղծում է մարդկության գործունեության մի այնպիսի ձև, ինչպիսին է արվեստը:

Գեղագիտական դաստիարակության ամենագործուն միջոցներից է գեղարվեստական ինքնագործունեությունը :

Մարդու գեղագիտական փորձը չի սպառվում գեղարվեստական ինքնագործունեությամբ, այլ ձևավորվում է նրա ընդհանրական գործունեություն տնթացքում[1. էջ 121_123]

Մյուս կարևոր խնդիրը, որ լուծում է բնանկարչության ուսուցումը, դա երեխայի դիտունակության և տեսածը իմաստավորված ընկալելու հատկության զարգացումն է: Բնանկարչության շնորհիվ երեխաները սովորում են աշխարհը ճիշտ ընկալել, իսկ առաջին գլխի ուսումնասիրություններից մենք գիտենք, որ ընկալումն ունի մի քանի առանձնահատկություններ, որոնցից առաջինը դա կայունությունն է(ձևի, չափի, գույնի): Եթե ես սա տեսել եմ մոտ հեռավորությունից և գիտեմ, որ այն մեծ է, ես միշտ այն ընկալելու եմ իրական չափերով, որքան էլ այն հեռանա իմ տեսողական ապարատից, կամ որ ծյունը սպիտակ է, որքան էլ միջավայրում լուսավորությունը թույլ լինի: Եվ թերևս դա է հիմնական պատճառը, որ կրտսեր դպրոցականները նկարելիս

այդ նրբությունները չեն արտահայտում իրենց նկարներում, ինչպես նաև գրեթե միշտ ընտրում են լոկալ գույներ:Այս ամենն արդյունք է այն բանի, որ ընկալումը մանկության տարիներին օրթոսկոպիկ է և միայն հետագա զարգացման ընթացքում է սկսում տարբերակել, որ առարկան իրենից հեռու է դա է պատճառը, որ այժմ այն փոքր է երևում, այսինքն՝ ընկալման զուգահեռ սկսում է գործել մտածողությունն ու հիշողությունը: Սակայն այս ամենը մեկ երկու դասով չի ձևավորվում, այլ երկարատև մարսման կարիք ունի, և այդ գործում մեզ լավագույնս օգնում է բնանկարչությունը, քանի որ այս ժանրում է պարզ ու մատչելի ներկայացված հեռանկարը, որը մանրակրկիտ ուսումնասիրել է այն փոփոխությունները, որոնք տեղի են ունենում մեր շրջապատում՝ կախված մեր տեղակայման դիրքից:

« Բնօրինակից նկարչության ժամանակ տարածության մեջ գտնվող միևնույն առարկան՝ ըստ իր տեղակայման ու հեռավորության, տարբեր չափերի ենք տեսնում: Մենք նկատում ենք նաև, որ այն, կախված դիտողի տեսանկյունից, փոխում է իր ձևը:

... Լեոնարդո դա Վինչին հեռանկարի թեորիան բաժանեց երեք բացարձակ առանձին մասերի:

Առաջին մասը գծային հեռանկարն է, որը թելադրում է չափերի թվացյալ փոփոխման օրենքները, և զինում է նկարչին առարկայի տարածական պատկերման մասին գիտելիքներով:

Երկրորդը՝ գունային հեռանկարն է, որը մեկնաբանում է գույնի փոփոխման օրինաչափությունները՝ կախված տարածության մեջ նրա տեղափոխությունից:

Երրորդը՝ օդային հեռանկարն է, սակայն սա վերաբերվում է առարկայի եզրերի և սահմանների հստակության կորստին՝ կախված հեռավորությունից : [6. էջ 17]

Օդային հեռանկարին բնորոշ են վառ գույների թուլացում, լույս ու ստվերի կոնտրաստի թուլացում, առարկայի եզրագծերի որոշ հատկությունների կորուստ՝ ըստ իր հեռավորության [6. էջ 18]:

Ընկալման հաստատունությունը բերում է մի շարք սխալների բնօրինակից նկարչության ընթացքում:

Այդ սխալներն ի հայտ են գալիս, որովհետև նկարողը առաջնորդվում է իր նախկինում կուտակած փորձով, տվյալ առարկայի մասին ունեցած իր գիտելիքներով և մոռանում է ամենակարևորը, այն որ նա այժմ այդ առարկային նայում է այլ տեսանկյունից, և թղթին տալիս է իր պատկերացումները՝ մոռանալով որ առարկան իրականության մեջ՝ մեր տեսադաշտում, բոլորովին այլ է» [6.էջ 34_35]:

Այս վերջին նշված սխալները, նկարչության տեսանկյունից, առկա են կրտսեր դպրոցականի նկարներում: Սակայն եթ չլիներ ընկալման կայունությունը, ապա անհնար կլիներ ընկալել տարածությունը, որը մենք ընկալում ենք առարկայի չափի, գույնի փոփոխման արդյունքում: Ինչպես արդեն նշվել է ընկալումը օրթոսկոպիկ է, և միայն կյանքի փորձի, տեսածը վերլուծելու շնորհիվ է մարդը կարողանում իմաստավորված ընկալել իր շրջապատը: Այս բոլոր նրբությունները մեկ-երկու օրում

չեն ձևավորվում, ոչ էլ մեկ տարում, քանի որ երեխայի առարկայական ընկալումն ավարտվում է կրտսեր դպրոցական տարիքի վերջում:

Այսպիսով, նկարչությունն առավել քան կարևոր գործունեության տեսակ է այս տարիքի երեխայի համար՝ օգնելով ամբոխջից առանձնացնել մի մասը, վերլուծել, ուսումնասիրել և նկարչության միջոցով ներկայացնել ու թղթին հանձնել յուրացված գիտելիքը, իրենց բնորոշ գունավորմամբ՝ արտահայտել սեփական դիրքորոշումը տվյալ երևույթի հանդեպ: Գործնականում բացահայտել և ամրապնդել շրջակա աշխարհի մասին գիտելիքները, առարկաների ու երևույթների միջև եղած փոխադարձ ազդեցություններն ու անտեսանելի կապերը:

«...Նկարչությանը, որպես ընդհանուր կրթական առարկա, անդրադարձել է Ժան-Ժակ Ռուսսոն իր «Էմիլ» գրքում: Ռուսսոն գրել է, որ շրջապատող աշխարհը ճանաչելու, բացահայտելու գործում շատ կարևոր դեր են կատարում զգայարանները, որոնք կարելի է զարգացնել երեխային բնօրինակից նկարել սովորեցնելով:Ռուսսոն առաջարկում էր նկարչության դասերն անցկացնել բնության գրկում, քանի որ բնության մեջ աշակերտները կարող էին տեսնել հեռանկարի երևույթը և հասկանալ նրա օրենքները:

Բացի այդ, ուսումնասիրելով բնությունը, աշակերտը ճաշակ է ձևավորում, սովորում է սիրել բնությունը, սկսում է հասկանալ նրա գեղեցկությունը:

Ռուսսոն գտնում էր, որ նկարել կարելի է սովորեցնել բացառապես բնօրինակից:Նա պնդում էր, որ երեխան բնությունից ու իրական առարկաներից բացի այլ ուսուցիչ չի կարող ունենալ:Սակայն ինչպես ասել է Գյոթեն «պետք չէ մոռանալ, որ երեխան առանց գեղագիտական դաստիարակության, մղելով դեպի բնությունը, մենք նրան ցանում ենք թե բնությունից, թե արվեստից:[էջ 40 ; 5]

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մենք արդեն գիտենք, որ երեխաների ընկալումը ծնվելու պահից սկսած արդեն իսկ ամբողջական բնույթ է կրում, և ոչ ամենևին առարկայական: Այդ իսկ պատճառով այս տարիքում երեխայի ուսուցումը պետք է սկսել ոչ թե էլեմենտների ուսուցումից, այլ ընդհանուրից, ամբողջից: Հարկավոր է ամբողջից գալ դեպի այդ էլեմենտը՝ ապահովելով երեխայի հոգեֆիզիոլոգիական աճին զուգահեռ, հարթ ուղի :Արվեստը դա այն ոլորտն է, որտեղ երեխան պետք է լինի ազատ, բայց ունենա առաջնորդ, ով ճիշտ կետից, համապատասխան ուժգնությամբ առաջ կտանի երեխային:

Դպրոցում նկարչության դասավանդումը կազմակերպելով գեղագիտական դաստիարակության սկզբունքները հաշվի առնելով՝ մենք աստիճանաբար, փուլ առ փուլ մոտենում ենք մեր նպատակին:

Հետազոտության շրջանակներում կատարելով ուսումնասիրություններ հենց երեխայի հետ աշխատանքի ընթացքում, եկել եմ այն համոզման, որ արվեստում դասավանդման մեթոդներն ընտրելիս, պետք է առաջնորդվել մանկավարժության անհատակողմնորոշիչ մոդելից: Այն ենթադրում է յուրաքանչյուր աշակերտին անհատական մոտեցում, որն էլ նկարչությունն ընձեռում է :Դասարանում միաժամանակ կլինեն աշակերտնե, ովքեր կարողանում են աշխատել երկրաչափական մարմիններով կառուցման տեխնիկայով, նրանց կողքին կլինեն աշակերտները, ովքեր ծավալը կարողանում են ստանալ գույնով՝ առանց մարմինը երկրաչափորեն վերլուծելու, կան երեխաներ՝ ում պետք է օրինակ ծառայել, տալ հուշումներ՝ խնդիրը լուծելու համար:

Այսպիսով հետազոտական աշխատանքի ընթացքում բացահայտվեցին նկարչության դասընթացներին երեխաների հետ տարվող աշխատանքների ընթացքում իրականացվող կրթական և դաստիարակչական խնդիրների նշանակությունը : Այն, թե ինչպես է նկարչությունը նպաստում երեխայի ընդհանուր զարգացման, անձի ձևավորման գործում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Լ.Ս. Ներսիսյան, Կրթություն և գեղագիտություն: /Երևան, Զանգակ-97,2002.-158 էջ/:
2. Մարության Սվետլանա Ալեքսանդրի, Դալլաքյան Ալլա Մարտինի, Նախադպրոցական մանկավարժություն (ուսումնական ձեռնարկ): Երևան, «Գասպրինտ», 2005,288 էջ
3. Выготский Л. С. Психология развития человека. -М.: Изд-АО Смысл; Изд-во ЭКСМО, 2004-1136с. Илл.
4. Г. Башинджагяан, Избранные произведения, Альбом, Автор-составитель Н. З. Башинджагяан; изд-во «Советский художник» 125319, Мосува
5. Методика преподавания изобразительного искусства в школе. Ростовцев Н Н. Изд-во.: Агар, год: 2000 ст.: 251.
6. Секачёва А.В., Чуйкина А.М., Пименова Л.Г., Рисунок и живопис: Учебник для средней. Учёба. Заведений.-М.:1983-216с., ил.
7. https://hy.m.wikipedia Կրտսեր դպրոցական տարիք
8. https://hy.m.wikipedia Հույզեր